ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

«25» հոկտեմբերի 2024թ. N ՕՀ-Հ

ՀՐԱՄԱՆ

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 4.4-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանների կազմման մեթոդական ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք.Երևան

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
2024 թվականի 25 հունվարի N 07-Լ հրամանի

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն մեթոդական ուղեցույցով կանոնակարգվում են հանրապետության բնակավայրերում գոյացող աղբի հավաքման, տեղափոխման, պահպանման, տեղադրման (հեռացման), վերամշակման ու օգտահանման գործընթացների պլանավորումն ու մշտադիտարկումը և սահմանվում են աղբահանության և կոշտ թափոնների արդյունավետ կառավարման համար չափորոշիչները:

2. Աղբահանության կառավարման տեղական պլանների (այսուհետև՝ Պլան) մշակման նպատակն է ՀՀ բնակավայրերում աղբահանության և կոշտ թափոնների կառավարման կայուն և ինտեգրված արդյունավետ համակարգի ներդրման, միասնական քաղաքականության վարման, հանրապետության բոլոր համայնքներում աղբահանության ծառայության մատուցման կայուն որակի ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմների ներդնումը: Այն նպատակ ունի ձևավորել համապարփակ մոտեցում աղբահանության կառավարման ոլորտում, համակարգել աղբահանության պլանավորումը տեղական ինքնակառավարման մարմիններում, ապահովել նպաստավոր պայմաններ աղբահանության և կոշտ թափոնների կառավարման կայուն համակարգի ներդրման և թափոնների գործածության ամբողջական շղթայի գործարկման համար:

3. Պլանների մշակումը նպատակաուղղված է նաև հանրապետության բոլոր բնակավայրերը աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ինտեգրված համակարգում ընդգրկմանը, աղբահանության ծառայությունների որակի գնահատման մեխանիզմների և ծառայությունների մատուցման ընթացքում վերահսկողության և մշտադիտարկման համակարգերի ներդրմանը:

4. Մեթոդական ուղեցույցով նախատեսվում է տեղական մակարդակում՝ պլանավորել հանրապետության բնակավայրերում աղբահանության և կոշտ թափոնների կայուն կառավարման գործընթացը՝ համահունչ աղբահանության ռազմավարության գերակայություններին և ՀՀ և ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի դրույթներին (մինչև 2022 թվականը մշակել թափոնների կառավարման պլաններ՝ թափոնների հինգ ստորակարգության մասով):

5. Պլանի մշակման մեթոդական ուղեցույցի սկզբունքն է ՀՀ բոլոր համայնքներում ներդնել աղբահանության և կոշտ թափոնների կառավարման զարգացման կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորումը: Ընդ որում, Պլանը, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը համահունչ և կիրառելի լինելով հանդերձ, պետք է սահմանի շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրների լուծման համատեքստում ընթացիկ և հեռանկարային թիրախներ՝ ներառելով թափոնների գործածության բոլոր բաղադրիչները*:*

6. Պլանները պետք է ներառվեն ինչպես համայնքների հնգամյա զարգացման ծրագրերում, այնպես էլ ամենամյա աշխատանքային պլաններում: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար պլանավորման գործընթացի արդյունավետությունը գնահատելու համար անհրաժեշտ է Պլանով սահմանված գործողությունների և թիրախների իրագործման արդյունքների գնահատում, ընթացիկ խնդիրների և խոչընդոտների վերլուծություն՝ մշտադիտարկում և հաշվետվողականություն, որը հնարավորություն կտա նախ բացահայտել ընթացիկ Պլանում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, ինչպես նաև հաջորդ ժամանակահատվածի պլանավորումն իրականացնելու գերակայությունները և զարգացման ներուժը:

2. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

7. Պլանը բաղկացած է հետևյալ բաժիններից.

1) <u>Առկա իրավիճակի գնահատում</u>
   - ա. Ներածություն
   - բ. Հիմնախնդիրներ, առաջնահերթություններ, տեսլական
   - գ. Պլանավորման տարածքի բնութագիր
   - դ. Թափոնների քանակ և բաղադրություն
   - ե. Թափոնների գործածություն
   - զ. Իրազեկվածության աստիճան
   - է. Ֆինանսավորում և բյուջե
   - ը. Մշտադիտարկում և հաշվետվողականություն.

2) <u>Պլանավորում</u>
   - ա. Կանխատեսումներ և կանխադրույթներ
   - բ. Տեսլական. նպատակների և թիրախների սահմանում (կարճաժամկետ և միջնաժամկետ)
   - գ. Գործողությունների պլան
   - դ. Երկարաժամկետ զարգացում
   - ե. Ֆինանսավորում և բյուջե
   - զ. Աղբահանության և թափոնների կառավարման բյուջետավորում

3) <u>Մշտադիտարկում և վերլուծություն</u>

8. Պլան կազմելու գործընթացը դյուրացնելու, ինչպես նաև այն ավելի ընթեռնելի և մատչելի դարձնելու նպատակով դրանց մի մասը ներկայացվում է աղյուսակների տեսքով: Ընդ որում, ենթաբաժիններում ներկայացված որոշ աղյուսակների պարագայում պլանավորման համար անհրաժեշտ տվյալների մի մասը կարող է ժամանակավորապես բացակայել կամ անհասանելի լինել, մասնավորապես՝ թափոնների տարբեր գործածության ձևերի հետ կապված տվյալները: Նշված բացակայող տվյալներ դեպքում անհրաժեշտ է պլանավորման մեջ ներառել դրանց հավաքման մեխանիզմների բարելավումը:

9. Հաջորդող երկու գլուխները քայլ առ քայլ ուղղորդում են Պլան կազմելու գործընթացը:

3. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1) Ներածություն (պլանի ամփոփագիր)
2) Հիմնախնդիրներ, առաջնահերթություններ, տեսլական
3) Պլանավորման տարածքի բնութագիր
4) Թափոնների քանակ և բաղադրություն
5) Թափոնների գործածություն
6) Իրազեկվածության աստիճան
7) Ֆինանսավորում և բյուջե
8) Մշտադիտարկում և հաշվետվողականություն

1) ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածությունից առաջ լրացվում է ստորև ներկայացված հետևյալ ընդհանուր տեղեկությունները պարունակող աղյուսակ 1-ը՝ նշելով Պլանի անվանումը *(օրինակ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման 2024-2028թթ պլան. նախատեսվող վերանայման ամսաթվերը՝ 2025թ սեպտեմբեր, 2027թ սեպտեմբեր):*

Աղյուսակ 1

Պլանի անվանում	
Պլանավորման մեջ ընդգրկված համայնք, բնակավայրեր	
Պլանավորման ժամանակաշրջան	
Ներկայացվող Պլանի նախատեսված վերանայման ամսաթվերը	
Պլանը կազմող անձանց անուն, ազգանուն, պաշտոն	
Պլանը կազմող անձանց էլ. հասցե և հեռախոս	
Պլանի էլեկտրոնային տարբերակը ներբեռնելու էլ. հասցե	

Ներածությունը (պլանի ամփոփագիրը) պարունակում է որոշակի տեղեկատվություն Պլանի վերաբերյալ, մասնավորապես՝ օրենսդրության ի՞նչ պահանջներից է բխում Պլանը և որքանո՞վ է համապատասխանում ռազմավարական գերակայություններին, որքանո՞վ է համահունչ թափոնների հիերարխիային և դրա ո՞ր աստիճանն է թիրախավորված Պլանում, արդյո՞ք պլանավորված են միջհամայնքային համագործակցություն, թափոնների կրճատման, իրազեկվածության աստիճանի բարձրացման ծրագրեր և այլն:

2) ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ, ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵՍԼԱԿԱՆ

Սույն ենթաբաժնում ներկայացվում են պլանավորմանը նախորդող բազմաշահառու կողմերի հետ մի շարք քննարկումների արդյունքներով Պլանավորման տարածքում աղբահանության և կոշտ թափոնների կառավարման տեսլականը և նպատակները՝ հետևյալ ուղղություններով.

- հիմնախնդիրների բացահայտում
- առաջնահերթությունների սահմանում
- ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն
- տեսլականի և նպատակների ձևակերպում:

3) ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Պլանը ներառում է պլանավորվող տարածքի ընդհանուր բնութագիրը:

Պլանավորման տարածքը կարող է ընդգրկել նաև մեկ և ավելի համայնքներ՝ աղբահանության գոտիավորման դեպքում: Այդ պարագայում, մշակվելուց հետո Պլանը պետք է հաստատվի բոլոր համայնքների ավագանիների կողմից:

ա. Պլանավորման տարածքի նկարագրություն

Աղյուսակ 2

	Ընդհանուր տարածք	Քաղաքային	Գյուղական	Արդյունաբերական	Գյուղատնտեսական	Կանաչ, անտառային
Տարածքը (հա)						
Տարածքը տոկոսով ընդհանուրից (%)						

բ. Աշխարհագրական սահմաններ

Քարտեզի վրա անհրաժեշտ է նշել տարածքի աշխարհագրական սահմանները և տեղադրել ենթաբաժնում /տպագիր քարտեզի պատճեն նշումներով կամ էլեկտրոնային տարբերակը/: Քարտեզը պարտադիր է:

գ. Ժողովրդագրական տեղեկատվություն

Աղյուսակ 3

Գրանցված բնակչություն (մարդ)	Փաստացի բնակվող (մարդ)	Տնտեսությունների թիվ	Բազմաբնակարան շենքերի թիվ	Բնակարանների թիվ

դ. Կոշտ թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակը և քանակը

Աղյուսակ 4

Թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակները	Քանակ	Նշումներ
Բնակելի նպատակային նշանակության շինություններ		
Բազմաբնակարան բնակելի շենքեր		
Անհատական բնակելի տներ		
Ոչ բնակելի նպատակային նշանակության շինություններ		
Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շինություններ		
Հյուրանոցային և հյուրատնային տնտեսություններ, սպորտի համարանախատեսված, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների շինություններ		
Վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շինություններ		
Արտադրական, արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շինություններ		
Գիտակրթական, մշակութային և գրասենյակային նշանակության շինություններ		
Շինություններ, որտեղ իրականացվում է մեկից ավելի, առանձնացված տնտեսական գործունեություն		

4) ԹԱՓՈՆՆԵՐԻ ՔԱՆԱԿ ԵՎ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Աղբահանության պլանավորման շրջանակներում հատկապես գոյացող թափոնների քանակի նվազեցման, տեսակավորման, վերամշակման, օգտահանման ծրագրեր և միջոցառումներ մշակելիս ու նախատեսելիս՝ առանձնապես կարևոր է թափոնների քանակի և բաղադրության որոշումը:

<u>ա. Գոյացող թափոնների քանակի ընդունված ցուցանիշներն են</u>.

- մեկ տարում գոյացող թափոնների ընդհանուր զանգվածը (տոննա/տարեկան)
- մեկ տարում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով (մարդ/կգ/տարի)
- մեկ օրում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով (մարդ/կգ/օր)

Բաղադրությունն ընդունված է ներկայացնել տոկոսով՝ ըստ յուրաքանչյուր բաժնեմասի ընդհանուր զանգվածի չափաբաժնի:

Պլանի մշակման և իրականացման արդյունավետությունը մեծապես կախված է հավաքագրվող տեղեկատվությունից, որը պետք է լինի հստակ, ճշգրիտ, պարբերական, տվյալները պետք է

հավաքագրվեն համայնքի/բնակավայրի տարբեր հատվածներից, տարբեր գործունեություն իրականացնող տնտեսվարողներից, տարվա տարբեր եղանակներին՝ մեկ շնչի հաշվով առաջացող աղբի կշիռը, բաղադրությունը, դրանց հնարավոր փոփոխությունները՝ ըստ սեզոնի և ժամանակահատվածի:

Տեղեկատվության հավաքագրումը և ճշգրիտ գնահատումը հնարավոր է հստակ մեթոդաբանությամբ և պարբերականությամբ նմուշառման և դրա արդյունքների վերլուծության պարագայում: Ընդ որում, նմուշառման պարբերականությունը թափոնների կառավարման համակարգի ներդրման սկզբնական փուլում պետք է լինի տարվա բոլոր սեզոններին՝ թափոնների գոյացման ինտենսիվության գործոններից կախված, իսկ հետագա տարիներին կարելի է նմուշառում իրականացնել որոշակի գործոնների փոփոխությունից կախված, ավելի փոքր պարբերականությամբ:

<u>բ. Թափոնների բաղադրության հիմնական տեսակները/հոսքերը</u>

- **Կոշտ կենցաղային թափոն**՝ աղբամաններում կուտակվող կոշտ կենցաղային թափոն՝ «Թափոնների մասին» ՀՀ օրենքով սահմանած թափոն,
- **Խոշոր եզրաչափի թափոն**՝ 1խմ և ավել ծավալով թափոն, որը չի տեղադրվում աղբամանում,
- **Շինարարարական աղբ**՝ քաղաքաշինական և շինարարական գործունեության հետևանքով աառաջացող աղբ,
- **Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն,**
- **Փաթեթավորման թափոն**՝ կոմերցիոն գոտում գոյացող փաթեթավորման թափոն,
- **Էլեկտրական և էլեկտրոնային թափոն (ԷԷՍ)**՝ չշահագործվող սարքավորում, որը սնուցվում է էլեկտրական ցանցից կամ մարտկոցից,
- **Կենսաբանական թափոն**՝ կենդանական ծագման պարենային և ոչ պարենային հումքի վերամշակումից ստացված թափոններ, ինչպես նաև անասնապահական, թռչնաբուծական և ձկնաբուծական ձեռնարկությունների գործունեության հետևանքով առաջացած թափոններ
- **Պարտեզային թափոն**՝ այգիների, պուրակների և այլ կանաչ տարածքներից հավաքված թափոն, այդ թվում՝ էտման թափոն, տերևներ և այլ նմանատիպ թափոն,
- **Անվադողեր**՝ մարդատար, բեռնատար մեքենաների և հեծանիվների շահագործումից դուրս եկած անվադողեր
- **Վտանգավոր թափոն**՝ (բացի ԷԷՍ թափոնից)՝ ներկեր, քիմիկատներ, դյուրավառ նյութեր, բժշկական թափոն և այլն, հնարավոր ցանկը ներկայացված է հավելվածում:

Պլանավորման տարածքում ներկայացվում է թափոնների բաղադրությունը՝ տոկոսներով ըստ ընդհանուրի: Աղյուսակ 5-ի II-րդ բաժնի սյունակը լրացվում է՝ եթե իրականացվել է թափոնների բաղադրության մանրակրկիթ ուսումնասիրություն:

Աղյուսակ 5

I Թափոնի տեսակը	%	II Թափոնի տեսակը՝ մանրակրկիթ բաղադրության ուսումնասիրության դեպքում	%
Օրգանական		Խոհանոցային	
		Այգիներից պուրակներից և այլ կանաչ տարածքներից	
Թուղթ և ստվարաթուղթ			
Պլաստիկ		Պլաստիկ 22եր	
		պոլիեթիլենային փաթեթավորումներ	
		Պլաստիկ տարաներ	
Ապակի			
Մետաղ			
Այլ թափոն		էլեկտրական	
		տեքստիլ	
		փայտ	
		վտանգավոր	
		Այլ	

5) ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ

Աղբահանության կառավարման համակարգում պլանավորում իրականացնելիս կարևոր է հստակ պատկերացում ունենալ թափոնների գործածության բոլոր փուլերի մասին՝ թափոնի առաջացումից մինչև վերամշակման կամ օգտահանման արդյունքում երկրորդային օգտագործում կամ վերացում/ոչնչացում կամ տեղադրում աղբավայրում, յուրաքանչյուր հաջորդական փուլում թիրախ սահմանելու հնարավորություններն ու խոչընդոտները վերլուծելու նպատակով:

Պլանի մշակման մեջ օգտագործվող թափոնների գործածության ձևերը և դրանց նկարագրությունները բերվում են ստորև՝ 6-րդ աղյուսակում:

Աղյուսակ 6

	Թափոններ գործածության ձև	Նկարագրություն
I	Խառը, չտեսակավորված հավաքում և տեղափոխում	Թափոնների խառը հավաքում և հեռացում օպերատորի կողմից դեպի աղբավայր կամ տեսակավորման կենտրոն: Ինչպես նաև թափոն առաջնացնողի կողմից աղբի ինքնափոխադրում դեպի տեսակավորման կենտրոն
II	Թափոնների տեսակավորված հավաքում և տեղափոխում	Սկզբնաղբյուրում թափոնների տեսակավորված հավաքում կամ թափոն առաջացնողի կողմից տեղափոխում դեպի տեսակավորման կենտրոն
III	Թափոնների վերաօգտագործում և վերակիրառում	Ապրանքի բազմակի օգտագործման ի սկզբանե տրված նպատակով (օրինակ՝ ապակե շիշ, ստվարաթղթե տուփ և այլն): Ինչպես նաև երբ այլ անձանց համար անցանկալի, ոչ պիտանի նյութերը, դրվում են տնտեսական շրջանառության մեջ այլ նպատակներով:
IV	Թափոնների վերամշակում և օգտահանում	Երբ տեխնոլոգիական գործընթացների արդյունքում փոխվում են թափոնների ֆիզիկական, քիմիական և կենսաբանական հատկությունները և դրանք օգտագործվում են որպես երկրորդային նյութ - վերամշակման միջոցով կենսագազի, բրիկետների, պելետի, բիոդիզելի, այլ վառելիքի ստացում - սննդային թափոնների աէրոբ մշակման (կոմպոստացման) միջոցով պարարտանյութի ստացում կամ չեզոքացում - ջերմային մշակման (կիզման) միջոցով ջերմային կամ էլեկտրական էներգիայի ստացում
IV	Վտանգավոր թափոնների չեզոքացում/վնասազերծում /	Թափոնների վտանգավոր հատկությունների նվազեցում կամ վերացում՝ մեխանիկական, ֆիզիկաքիմիական կամ կենսաբանական մշակման միջոցով
VI	Թափոնների տեղադրում ոչ սանիտարական աղբավայրում	տեղադրում քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին չհամապատասխանող աղբավայրում
VII	Տեղադրում սանիտարական աղբավայրում	տեղադրում քաղաքաշինական, բնապահպանական սանիտարական նորմերին համապատասխանող աղբավայրում

ա. Թափոնների քանակն ըստ հիմնական տեսակների և դրանց գործածության ձևերի

Սույն ենթաբաժնում 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերում ներկայացված տեղեկատվության հիման վրա կազմվում է ամփոփ տեղեկատվական աղյուսակ՝ ըստ թափոնների քանակի, տեսակների և գործածության ձևերի (Աղյուսակ 7):

Աղյուսակ 7

Թափոնի տեսակ	Աղբի գոյացում 1 շնչի հաշվով, կգ/տարի/մարդ	Աղբի տարեկան գոյացում, տոննա/տարի	Թափոնների գործածության ձևեր							**Նշումներ**
			I	**II**	**III**	**IV**	**V**	**VI**	**VII**	
			Խառը հավաքում (% ընդհանուր քանակից)	Տեսակավորված հավաքում (% ընդհանուր քանակից)	Վերաօգտագործում /կրկնաօգտագործում (% ընդհանուր քանակից)	Վերամշակում և/կամ օգտահանում (% ընդհանուր քանակից)	Վտանգավոր թափոնների չեզոքացում/վնասազերծում (% ընդհանուր քանակից)	Տեղադրում ոչ սանիտար. աղբավայրում (% ընդհանուր քանակից)	Տեղադրում սանիտար. աղբավայրում (% ընդհանուր քանակից)	
Կոշտ կենցաղային թափոն										
Խոշոր եզրաչափերի թափոն										
Շինարարական աղբ										
Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն										
Անվադողեր										
Փաթեթավորում և փաթեթվածք										
Էլեկտրական և էլեկտրոնային թափոն										
Կենսաբանական թափոն										
Վտանգավոր թափոններ										

7-րդ Աղյուսակի լրացման օրինակ

Աղյուսակի լրացումը պարտադիր է, չի լրացվում միայն համապատասխան տվյալների տեղեկատվության բացակայության սվանդակները՝ ինչ-որ պատճառով չհավաքագրելու արդյունքում տվյալի բացակայության կամ համապատասխան համայնքի դեպքում տվյալ ցուցանիշը չգրանցվելու դեպքում. այս մասով լրացուցիչ տեղեկատվություն կարելի է ներկայացնել «Նշումներ» վանդակում

Թափոնի տեսակ	Աղբի գոյացում 1 շնչի հաշվով, կգ/տարի/մարդ	Աղբի տարեկան գոյացում, տոննա/տարի	Թափոնների գործածության ձևեր							
			I	**II**	**III**	**IV**	**V**	**VI**	**VII**	**Նշումներ**
			Խառը հավաքում (% ընդհանուր քանակից)	Տեսակավորված հավաքում (% ընդհանուր քանակից)	Վերաօգտագործում /կրկնաօգտագործում (% ընդհանուր քանակից)	Վերամշակում և/կամ օգտահանում (% ընդհանուր քանակից)	Վտանգավոր թափոնների չեզոքացում/ վնասազերծում (% ընդհանուր քանակից)	Տեղադրում ոչ սանիտար. աղբավայրում (% ընդհանուր քանակից)	Տեղադրում սանիտար. աղբավայրում (% ընդհանուր քանակից)	
Կոշտ կենցաղային թափոն	200	6000	80%	15%	5%	15%		80%		
Խոշոր եզրաչափերի թափոն	30	900		100%	20%	30%		50%		
Շինարարական աղբ	1,3	39	30%	50%	40%	10%		50%		
Շահագործումից դուրս եկած մեքենաներ, մետաղական ջարդոն										
Անվադողեր	3	90		100%	70%	10%		20%		
Փաթեթավորում և փաթեթվածք	4	120	30%	70%	30%	40%		30%		
Էլեկտրական և էլեկտրոնային թափոն			90%	10%	5%			90%		
Կենսաբանական թափոն										

7-րդ աղյուսակի (օրինակի) լրացման բացատրագիր

Պայմանականորեն ընդունենք համայնքի բնակչության թիվը 30 000 մարդ և մեկ շնչի հաշվով առաջացած թափոնների՝ աղյուսակում լրացված քանակը՝ ըստ համապատասխան տեսակների:

Աղյուսակը 4-ը ցույց է տալիս, որ համայնքում տարեկան առաջանում է.

- *6000 տ կոշտ կենցաղային թափոն, որի 80%-ը հավաքվում է խառը և ամբողջությամբ տեղադրվում ոչ սանիտարական աղբավայրում (համայնքին սպասարկող սանիտարական աղբավայր դեռևս չկա), 15%-ը հավաքվում է տեսակավորված, իսկ 5%-ը՝ վերօգտագործվում է (չի հավաքվում), օրինակ՝ ապակե տարաներ: Տեսակավորված հավաքված ԿԿԹ-ի մի մասի (ընդհանուր քանակի 15%-ը) վերամշակման արդյունքում արտադրվում է պլաստիկի հումք, կամ աէրոբ մշակման արդյունքում ստացվում է պարարտանյութ* և այլն:
- *900 տ խոշոր եզրաչափի թափոն*, որը տեսակավորված է հավաքվում (առանձին) և ամբողջությամբ տեղափոխվում է ոչ սանիտարական աղբավայր,
- 39 *տ շինարարական աղբ*, որի 30 տոկոսը հավաքվում է խառը իսկ 50%-ը տեսակավորված (առանձին): ընդհանուր քանակի 40%-ը վերաօգտագործվում է, իսկ 10%-ը վերամշակվում/օգտահանվում է և ընդհանուր քանակի 50%-ը տեղադրվում է աղբավայրում:
- *90 տ անվադող*, որն ամբողջությամբ հավաքվում է տեսակավորված (առանձին): Դրա մի մասը (ընդհանուր քանակի 70%-ը) վերակիրառվում է պաշտպանական ինժեներական ենթակառուցվածքներում, 10%-ը վերամշակվում է, 20 %-ը տեղադրվում աղբավայրում:
- 120 *տ փաթեթավորում և փաթեթվածք*, որի 30%-ը հավաքվում է խառը, իսկ 50%-ը տեսակավորված (առանձին): Ընդհանուր քանակի 30%-ը վերաօգտագործվում է, իսկ 400%-ը վերամշակվում/օգտահանվում է և ընդհանուր քանակի 30%-ը տեղադրվում է աղբավայրում:
- Էլեկտրական և էլեկտրոնային թափոնի 90%-ը հավաքվում է խառը, 10-ը տեսակավրոված՝ առանձին, ընդհանուր քանակի 5%-ը վերաօգիտագործվում է, իսկ 90%-ը տեղադրվում աղբավայրում:

Չլրացված սյունակների դեպքում (տվյալների բացակայության պարագայում) անհրաժեշտ է չլրացման պաատճառների վերաբերյալ նշել «Նշումներ» սյունակում:

բ. Աղբահանության և կոշտ թափոնների հետ գործածություն

Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման համար կարևոր է, որ մանրամասնորեն նկարագրվեն և գնահատվեն թափոնների գործածության առանձին փուլերը, դրանց համար անհրաժեշտ կարողությունները, ենթակառուցվածքները և ռեսուրսները, ինչպես նաև դրանցում ներգրավված դերակատարների դերը, իրավասության շրջանակները և պատասխանատվության չափը:

- **Աղբահանություն և կոշտ կենցաղային թափոնների հավաքում**

ՀՀ համայանքներում աղբի հավաքումը սովորաբար կատարվում է՝

- փողոցներում և բակերում տեղակայված աղբամաններից
- բազմահարկ բնակելի շենքերի աղբամուղի խցերից
- բնակելի տներից և կազմակերպություններից գրաֆիկով կամ պատվերով ժամանող աղբատարների միջոցով
- ինքնափոխադրմամբ՝ երբ թափոն գոյացնողը կազմակերպում է իր գոյացած թափոնի փոխադրումը տեսակավորման, վերամշակման, օգտահանման կենտրոններ:

Կարևոր է գնահատել նաև, թե պլանավորման տարածքի բնակչության ո՞ր մասն է օգտվում թափոնների հավաքման ծառայությունից:

Աղյուսակ 8

Թափոնների հավաքման մեթոդ	Ծառայությունից օգտվող բնակչություն (%)	Տեսակավորված հավաքում (տոննա)	Տեսակավորված հավաքում (%)	Չտեսակավորված հավաքում (տոննա)	Չտեսակավորված հավաքում (%)	Նշումներ
Աղբամաններից						
Աղբախցերից						
Գրաֆիկով՝ տնից կամ կազմակերպությունից						
Պատվերով՝ տնից կամ կազմակերպությունից						
Ինքնափոխադրում						

- **Աղբահանություն իրականացնող օպերատորներ**

Աղյուսակ 9

Օպերատորի անվանում	Սպասարկվող համայնքներ/ բնակավայրեր	Սպասարկվող տարածքի բնակչության թիվ	Օպերատորի աղբատար մեքենաների թիվը	Օպերատորի աղբատար մեքենաների տեսակն, տարողությունը (բաց/փակ թափքով, կոմպակտորևն)	Հավաքվող թափոնների տեսակները/ խառը, տեսակավորված պլաստիկ, թուղթ..., շինարարական և այլն հավաքում	Օպերատորի աշխատանքի գնահատական (1-ից 5)	Նշումներ
1							
2							
3							

- **Աղբի տեղափոխման սխեմաներ**

Սույն ենթաբաժնում հարկավոր է նկարագրել թե ինչպես է պլանավորման տարածքում կատարվում աղբահանությունը: Եթե պկանավորման տարածքում գործում են տեսակավորման կենտրոն, վերամշակման արտադրամասեր, տեղակայված է փոխաբեռնման կայան. ապա անհրաժեշտ է նշել:

Աղյուսակ 10

Թափոնի տեսակ	Հեռավորություն մինչև աղբավայր, կմ	Հեռավորություն մինչև փոխաբեռնման կայան, կմ	Հեռավորություն մինչև տեսակավորման կենտրոն, կմ	Հեռավորություն մինչև այլ գործածության կայանք /վերամշակման գործարան և այլն/ կմ	Նշում ինքնափոխադրման մասին
Կոշտ կենցաղային թափոն					
Խոշոր եզրաչափերի թափոն					
Շինարարական աղբ					
Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն					
Անվադողեր					
Փաթեթավորում և փաթեթվածք					
Էլեկտրական և էլեկտրոնային թափոն					

- **Վերօգտագործում և նախապատրաստում վերաօգտագործման կամ վերակիրառման համար**

Թափոնների կայուն կառավարում և արդյունավետ պլանավորում իրականացնելու համար կարևոր է ճիշտ գնահատել թափոնների վերօգտագործման հնարավորությունները և նշել այն արտադրողներին, որոնք իրականացնում են իրենց արտադրանքի բաղադրիչների (տարա, փաթեթավորում և այլն) վերադարձ՝ կրկնակի օգտագործելու նպատակով (օրինակ՝ հյութերի, կաթնամթերքի ապակե տարաների վերադարձ գործարան): Վերաօգտագործման արժեշղթայում կարևոր են նաև համապատասխան ապրանքները նախապատրաստող կետերը, որոնք իրականացնում են վերանորոգման աշխատանքներ՝ կահույքի, կենցաղային տեխնիկայի, շինարարական բաղադրիչների, հագուստի, կոշիկի և այլն:

Աղյուսակ 11

Արտադրողի անվանում	Արտադրանքի տեսակ	Վերադարձվող բաղադրիչ (ապակե, պլաստիկե տարա, փաթեթավորում և այլն)	Վերադարձի/հավաքման մեխանիզմ (ընդունվում է գործարանում, խանութում, ընդունման կետերում)	Սպառողի համար վերադարձի հարմարություն (անհարմար, հարմար)	Նշումներ

-
- **Վերանորոգման կարողություններ**

Աղյուսակ 12

Արտդրանքի տեսակ	Վերանորոգման կետերի թիվ	Նշումներ

սառնարան		
Լվացքի մեքենա		
Այլ կենցաղային տեխնիկա		
Հագուստ կոշիկ		
Կահույք		
Ավտոպահետսամասեր		
Շինարարություն /պատուհան, դուռ, տանիք և այլն		

- **Թափոնների ոչ ֆորմալ տեսակավորում և օգտահանում**

Սույն ենթաբաժնում նկարագրվում է ոչ ֆորմալ հատված կողմից իրականացվող թափոնների տեսակավորման և օգտահանման գործունեությունը, ինչպես աղբավայրերում, այնպես էլ աղբամաններից, բակերից, խանութների տարածքներից և այլն:

Աղյուսակ 13

Տեսակավորվող թափոնի տեսակ	Հավաքվում է ընդունման կետում (այո/ոչ)	Հավաքվում է աղբամաններից (այո/ոչ)	Հավաքվում է սպասարկման օբյեկտներից (այո/ոչ)	Հավաքվում է աղբավայրերում (այո/ոչ)
Ապակի				
Պլաստիկ				
Մետաղ				
Թուղթ				
Ավտոմեքենայի մարտկոց				
Այլ թափոններ /նշել/				

- **Թափոնների գործածության կայանքներ**

Աղյուսակ 14

Թափոնների գործածության կայանքներ	Առկայություն (պլանավորման տարածքում առկա է/առկա չէ, առկա է այլ տարածքում)	Հզորություն, հազ տ/տարի	Հեռավորություն պլանավորման տարածքից, կմ	Նշումներ
Տեսակավորման կենտրոն				
Ապակու վերամշակման կայանք				
Մետաղի վերամշակման կայանք				
Պլաստիկի վերամշակման կայանք				
Թղթի վերամշակման կայանք				
Կոմպոստացման կայանք				
Կենսագազի արտադրման կայանք				
Աղբակիզման կայանք				
Վնասազերծման/վերացման կայանք				

Փոխաբեռնման կայան				
Աղբավայր				
Այլ /նշել/				

- **Աղբավայրեր և աղբանոցներ**

Սույն ենթաբաժնում նկարագրվում են պլանավորման տարածքում առկա բոլոր աղբավայրերը/ աղբանոցները, ինչպես նաև պլանավորման տարածքից դուրս գտնվող այն աղբավայրերը, որոնք սպասարկում են պլանավորման տարածքում գտնվող համայնքները և բնակավայրերը:

Աղյուսակ 15

Աղբավայր /գտնվելու վայրը/	Շահագործող համայնքներ /բնակավայրեր	Աղբավայրի մակերես, հա	Տեղադրվող աղբի տեսակ	Ստեղծման իրավական հիմք /որոշման համար, ամսաթիվ/	Սեփականության /օգտագործման իրավունք	Շահագործողի անվանում	Աղբի տեղադրման վճարը /ՀՀ դրամ/տոննա	Դեպի աղբավայր տանող մուտքի ճանապարհատվածի վիճակը
1								
2								

- **Պատասխանատվության փաստացի բաշխումը**

Պլանի նպատակային մշակման և արդյունավետ իրականացման համար կարևոր է հստակ սահմանել Պլանում այս կամ այն կերպ ներգրավված անձանց՝ շահակիրների, պատասխանատուների, իրականացնողների միջև պատասխանատվության շրջանակները: Պլանով նախատեսված տարբեր գործողություններ և թափոնների գործածության տարբեր փուլեր ենթադրում են տարբեր պատասխանատուներ և շահակիրներ:

Աղյուսակ 16

Պատասխանատուներ	Իրազեկության բարձրացում (%)	Խառը հավաքում (%)	Տեսակավորված հավաքում (%)	Տեղափոխում (%)	Տեսակավորում /գործարանային/ (%)	Վերաօգտագործում /կրկնաօգտագործում (%)	Վերամշակում և/կամ օգտահանում (%)	Վտանգավոր թափոնների վնասազերծում/ վերացում (%)	Տեղադրում աղբավայրում (%)
ՏԻՄ									
Մանսավոր հատված									
Արտադրող									
Բնակչություն									

Քաղաքացիական կազմակերպություն									

16-րդ աղյուսակի լրացման օրինակ

Պատասխանատուներ	Իրազեկության բարձրացում (%)	Խառը հավաքում (%)	Տեսակավորված հավաքում (%)	Տեղափոխում (%)	Տեսակավորում /գործարանային/ (%)	Վերաօգտագործում /կրկնաօգտագործում (%)	Վերամշակում և/կամ օգտահանում (%)	Վտանգավոր թափոնների վնասազերծում/ վերացում (%)	Տեղադրում աղբավայրում (%)
ՏԻՄ	50	100	20	80					
Մասնավոր հատված			10	10		10			100
Արտադրող			30	10		50			
Բնակչություն						20			
Քաղաքացիական կազմակերպություն	50		40						

16-րդ աղյուսակի լրացման բացատրագիր

Աղյուսակ 16-ում պայմանականորեն լրացված տվյալները ցույց են տալիս, որ իրազեկվածության բարձրացման ծրագրեր իրականացնում են ՏԻՄ-ը և քաղաքացիական կազմակերպությունները /ՀԿ-ը և այլ/, աղբի չտեսակավորված հավաքման համար պատասխանատու է ՏԻՄ-ը, Տեսակավորված հավաքման համար՝ քաղաքացիական կազմակերպությունները՝ 40%, արտադրողը /արտադրողի ընդլայնված պատասխանատվություն/՝ 30 %, ՏԻՄ-ը՝ 20 և 10%՝ մասնավոր հատվածը: (օրինակ՝ արտադրողն իրականացնում է բնակչության և սպասարկման ոլորտի տնտեսվարողների կողմից տեսակավորված, վերօգտագործման/վերամշակման համար նախատեսված աղբի տեղափոխում՝ փաթեթավորման/փաթեթվածքի, պլաստիկի, մետաղական ու ապակե շշերի, տարաների տեսակավորված հավաքում) Վերաօգտագործման համար 50 % արտադրողի, 20% բնակրի, 10 % մասնավոր հատվածի վրա է ընկնում: են Աղբավայրում տեղադրումը իրականացնում է աղբավայրը շահագործող մասնավոր ընկերությունը :

շահակիրների ներգրավվածությունն ըստ թափոնների տեսակների գործածության

Սույն ենթաբաժնում ներկայացվում է թափոնների հիմնական տեսակների կառավարման համապատասխան փուլում ներգրավված դերակատարներին: Դերակատարները ներառում են վերոհիշյալ 4 խումբը՝

- ՏԻՄ
- Մասնավոր հատված /ՄՀ/,
- Բնակչություն /Բն/
- Քաղաքացիական հասարակական կազմակերպություն /ՔԿ/

Դրա հետ մեկտեղ, եթե գործում է արտադրողի ընդլայնված պատասխանատվության սխեման, ապա համապատասխան վանդակում պետք է նշվի նաև ԱԸՊ: Օրինակ, եթե փաթեթավորման որոշ թափոնների դեպքում Պլանավորման տարածքում գործում է ԱԸՊ, իսկ մնացած փաթեթավորման թափոնների հավաքումը կազմակերպում է ՏԻՄ-ը, ապա 17-րդ աղյուսակի համապատասխան վանդակում պետք է նշել՝ ՏԻՄ, ԱԸՊ:

Աղյուսակ 17

Թափոնի տեսակ	Իրազեկության բարձրացում	Խառը հավաքում	Տեսակավորված հավաք	Տեղափոխում	Վերաօգտագործում /կրկնաօգտագործում	Վերամշակում և/կամ օգտահանում	Տեղադրում աղբավայրում
Կոշտ կենցաղային թափոն							
Խոշոր եզրաչափերի թափոն							
Շինարարական աղբ							
Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն							
Անվադողեր							
Փաթեթավորում և փաթեթվածք							
Էլեկտրական և էլեկտրոնային թափոն							
Կենսաբանական թափոն							
Վտանգավոր թափոններ							

- **Անձնակազմի կարողությունների գնահատում**

Արդյունավետ պլանավորման համար կարևոր է հստակ գնահատել Աղբահանության և կոշտ թափոնների տեղական կառավարման մեջ ներգրավված տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան անձնակազմի կարողություններն ըստ անհրաժեշտ հմտությունների մակարդակի (Աղյուսակ 18): Վերլուծություն հիմք կհանդիսանա Մեթոդաբանության 2-րդ բաժնում պլանավորման զարգացմանն ուղղված միջոցառումների և նպատակների մշակման համար:

Աղյուսակ 18

Հմտություն/ ոլորտ	Համապատասխան գիտելիքներ ու հմտություն ունեցող աշխատակիցների թիվը	Գիտելիքների ու հմտությունների ներկայիս մակարդակ (1-շատ ցածր, 2-ցածր, 3-միջին, 4-բարձր, 5-գերազանց)	Նշումներ
Թափոնների կառավարման գիտելիքներ			
ՀՀ օրենսդրության իմացություն			
Տվյալների հավաքագրում			
Համակարգչային քարտեզագրում			
Գնումների կազմակերպում			
Պայմանագրերի կառավարում			
Գործառնական հմտություններ			
Ֆինանսական վերլուծության իմացություն			

- **Աղբահանության և Կոշտ թափոնների գործածության քարտեզ**

Արդյունավետ լոգիստիկ լուծումներ գտնելու տեսանկյունից ԿԹ պլանավորման համար կարևոր է թափոնների գործածության օբյեկտնեևի տեղակայման հստակ տեղեկատվությունը, ինչպես նաև վերջիններիս տեսողական վերապատկերումը քարտեզի վրա: Համակարգչային քարտեզագրման կարողությունների բացակայության դեպքում անհրաժեշտ է պլանավորման տարածքի տպագիր քարտեզի վրա կատարել համապատսխան նշումները և պատճենի տեսքով տեղադրել եսույն ենթաբաժնում: Միաժամանակ, ՏԿԵ նախարարության նախաձեռնությամբ մշակվել և փորձնական գործարկվել է մի քանի համայնքներում ծրագրային գործիք, որը աստիճանաբար նախատեսվում է ներդնել բոլոր համայնքներում: Գործիքը ներառում է պլանավորման տարածքում առկա թափոն առաջացնող բոլոր օբյեկտները, թափոնների գոծածության համապատասխան տեսակների կայանքները, աղբավայրերը, դրանց մոտեցնող ճանապարհները, աղբամանների տեղադիրքը, մեքենասարքավորումները և այլն: Այն հնարավորություն է տալիս ծրագիրը սպասարկող աշխատակցին աղբահանության կառավարման համար անհրաժեշտ մեքենաների, սարքավորումների, նյութերի ընտրությամբ, այլ անհրաժեշտ տեղեկատվության ներմուծմամբ ստանալ աղբահանության լավագույն սխեման, իրականացնել գնումների և ֆինանսական պլանավորում, արդյունավետ վերահսկողություն աղբահանության գործընթացի նկատմամբ:

6) ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ

Թափոնների կայուն կառավարում ապահովելու կարևորագույն նախապայման է ինչպես բնակչության, այնպես էլ կառավարման համար պատասխանատու անձնակազմի իրազեկվածության անհրաժեշտ աստիճանը:

Պատասխանատուների իրազեկվածությունը կարևոր է Պլանը մշակելիս խնդիրները ճիշտ գնահատելու, լուծման առաջնահերթությունները հստակ սահմանելու և հետևողականորեն իրականացնելու համար:

Բնակչության իրազեկվածությամբ մեծապես պայմանավորված են սկզբնաղբյուրում թափոնների առաջացումը նվազագույնի հասցնելու, տեսակավորված հավաքելու, վերօգտագործելու հաջողությունները՝ հետևապես և Պլանի իրականացման հաջողությունը:

Իրազեկվածության աստիճանի գնահատման միջազգայնորեն հաջողված մեթոդ է բնակչության սոցիալական տարբեր խմբերում, տարբեր գործունեություն իրականացնող տնտեսվարողների, ինչպես նաև Պլանի մշակման և իրականացման համար պատասխանատու անձնակազմի շրջանում հարցումներ իրականցնելը՝ նախապես մշակված հարցաշարերով: Հարցաշարերը պետք է ուղղված լինեն թափոնների կառավարման խնդիրների վերաբերյալ առկա գիտելիքների աղբյուրների, տեղեկացվածության, վերաբերմունքի և ակնկալիքների, ինչպես նաև թափոնների կառավարման առկա իրավիճակից բնակիչների և տնտեսվարողների գոհունակության աստիճանի գնահատմանը, ինչպես նաև պարունակեն տեղեկություններ այն լրացնողի/հարցվողի տարիքի, կրթության, մասնագիտության, զբաղվածության/աշխատավայրի վերաբերյալ: Հարցման արդյունքներն ամփոփվում են Աղյուսակ 19-ում և ներառվում Պլանում: Կախված հարցվողից՝ Պլանի մշակման և իրականացման պատասխանատուներն ըստ անհրաժեշտության, կարող են հարցաշարում ներառել լրացուցիչ հարցեր:

Հարցման (իրազեկվածության գնահատման) արդյունքները պետք է հիմք հանդիսանան Պլանում իրազեկվածության բարձրացման ծրագրերի նախատեսման, դրանց թիրախների սահմանման համար: Դրանք կարող են ուղղված լինել, օրինակ՝ թափոնների կայուն կառավարման ոլորտում գիտելիքների ընդլայնմանը, տնտեսվարողների կողմից քաղաքացիների որևէ վարքագծի խրախուսմանը (օրինակ՝ ապակե տարան ընդունման կետ վերադարձնելու դեպքում արտադրողի կողմից զեղչերի տրամադրում) կամ տնտեսվարողների, ՏԻՄ-ի կողմից «պատժի» գործիքի կիրառմանը (օրինակ՝ քաղաքացիների կողմից պլաստիկե փաթեթավորում/փաթեթվածք ընտրելու դեպքում ապրանքի արժեքի բարձրացում, վարչական իրավախախտումների մասին օրենսդրությամբ նախատեսված գործիքներ):

Աղյուսակ 19

Հարցեր	Իրազեկվածության/գոհունակության աստիճան /1-շատ ցածր, 2-ցածր, 3-միջին, 4-բարձր, 5-գերազանց/	Նշումներ/ առաջարկություններ
1. Թափոնների կառավարման վերաբերյալ առկա գիտելիքների աղբյուրներ		
Կրթության տարբեր աստիճաններ (նախադպրոցական, դպրոցական, բուհական)		
Սոցիալական գովազդներ		
Պաշտոնական տեղեկատվություն ԶԼՄ-ներով		
Քաղաքացիական կազմակերպությունների գործունեություն		
2. Թափոնների կառավարման վերաբերյալ տեղեկացվածություն		
Թափոնների թերի կառավարման բնապահպանական ազեցությունները		
Թափոնների թերի կառավարման սոցիալական ազեցությունները		
Թափոնների թերի կառավարման տնտեսական ազեցությունները		
Թափոնները աղբավայր հեռացնելու ազդեցությունները		
Թափոնների հիերարխիայի իմացություն		
Օրենսդրության խրախուսող գործիքներ		
Օրենսդրության պատժիչ գործիքներ		
Թափոնների կառավարման ոլորտում իրականացվող բնապահպանական ծրագրեր		
3. Թափոնների կայուն կառավարման վերաբերմունք և ակնկալիքներ		
Թափոնների կայուն կառավարման կարևորությունը		
Թափոնների տեսակավորման օգուտները		
Թափոնների վերօգտագործման օգուտները		
Թափոնների վերամշակման, օգտահանման օգուտները		
Իրազեկվածության արշավների օգուտները		
4. Բնակիչների և տնտեսվարողների գոհունակություն		
Աղբամանների տեղակայվածություն		
Աղբամանների վիճակ		
Չտեսակավորված թափոնների հավաքման հաճախականություն		
Տեսակավորված թափոնների հավաքում		
Համայնքի սանիտարական վիճակ		
Աղբահանության վճար		

Մատուցված ծառայությունների ընդհանուր վիճակ		

7) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԲՅՈՒՋԵ

Սույն բաժնում ներկայացվում է Պլանավորման տարածքում ֆինանսատնտեսական նկարագիրը:

ա. Աղբահանության եկամուտների և ծախսերի ընդհանուր նկարագրություն

Աղյուսակ 20

Տարի	Փաստացի բնակչության թիվ	Աղբահանության սահմանված վարձավճարը, դրամ/անձ	Գործող տնտեսվարող սուբյեկտների թիվը	Աղբահանության համակարգում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների թիվը /աղբահանության պայմանագիր /	Վարձավճարների հավաքման ընդհանուր ծախսեր, դրամ/տարի	Աղբի հավաքման և տեղափոխման ծախս, դրամ/տարի	Աղբավայրում աղբի տեղադրման ծախս, դրամ/տոննա

բ. Հավաքագրում և ծախսեր

Սույն ենթաբաժնում ներկայացվում է աղբահանության և թափոնների կառավարման եկամուտներն ու ծախսերը վերջին երկու-երեք տարվա ընթացքում (Աղյուսակ 21):

Աղյուսակ 21

Տարի	Եռամսյակ	Աղբահանության եկամուտ/ հավաքագրում						Եկամուտ վերամշակման ենթակա թափոնների վաճառքից	Աղբահանության ծախս		Սանիտարական մաքրման ծախս	
		Բնակչություն			Տնտեսվարող սուբյեկտներ				Պլան	Փաստ	Պլան	Փաստ
		Պլան	Փաստ	%	Պլան	Փաստ	%					
2021	1-ին եռ.											
	2-րդ եռ.											
	3-րդ եռ.											
	4-րդ եռ.											
Տարեկան 2021թ.												
2022	1-ին եռ.											
	2-րդ եռ.											
	3-րդ եռ.											
	4-րդ եռ.											
Տարեկան 2022թ.												

2023	1-ին եռ.											
	2-րդ եռ.											
	3-րդ եռ.											
	4-րդ եռ.											
Տարեկան 2023թ												

գ. Թափոնների գործածության հասանելի տարբերակների արժեքներն ըստ տեսակների

Աղյուսակ 22

Թափոնի տեսակ	Խառը հավաքում (դր/տ)	Տեսակավորված հավաքում (դր/տ)	Տեղափոխում (դր/տ)	Տեսակավորում /մշակում/ (դր/տ)	Վաճառք որպես հումք (դր/տ)	Վերամշակում/օգտագործում (դր/տ)	Կիրառում (դր/տ)	Տեղադրում աղբակույտում (դր/տ)
Կոշտ կենցաղային թափոն								
Խոշոր եզրաչափերի թափոն								
Շինարարական աղբ								
Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն								
Անվադողեր								
Փաթեթավորում և փաթեթվածք								
Էլեկտրական և էլեկտրոնային թափոն								
Կենսաբանական թափոն								
Վտանգավոր թափոններ								

դ. Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ինքնարժեքը

Թափոնների կառավարման ինքնարժեքի հաշվարկը Պլանի պարտադիր բաղկացուցիչ մասն է: Այն հաշվարկվում է՝ 23-րդ աղյուսակը լրացնելով:

Աղյուսակ 23

	Կոշտ կենցաղային թափոն	Խոշոր եզրաչափերի թափոն	Շինարարական աղբ	Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն	Անվադողեր	Փաթեթավորում և փաթեթվածք	Էլեկտրական և էլեկտրոնային թափոն	Կենսաբանական թափոն	Վտանգավոր թափոններ
Աշխատուժ, դրամ/տարի									
Արտահագուստ և գործիքներ, դրամ /տարի									
Տեխնիկա շահագործում և պահպանում									
Վառելիքի ծախս									
Աղբամանների շահագործում և պահպանում									
Վարչական ծախսեր, դրամ/տարի									
Բնապահպանական հարկ									
Թափոնի գոյացում տոննա/տարի									
Մեկ անձի կողմից գոյացվող թափոնի քանակ /կգ/տարի									

8) ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Յուրաքանչյուր ծրագրի արդյունավետությունն ապահովելու կարևոր գործիք է մշտադիտարկումն ու արդյունքների գնահատումը, ուստի այն Պլանի պարտադիր բաղկացուցիչ մասն է:

Սույն բաժնում պետք է գնահատական տրվի նախկին պլանավորման ժամանակ սահմանված նպատակների իրագործմանը: Այն դեպքում, երբ Պլանը համայնքում առաջին անգամ է ներդրվում, որպես «նախկինում սահմանված նպատակներ»՝ արդյունքների գնահատման համեմատության հիմք, կարող են հանդիսանալ Ռազմավարությամբ սահմանված թիրախները:

ա. Աղբահանության և կոշտ թափոնների ներկայիս համակարգի ունակությունը՝ հասնելու նախկինում սահմանված նպատակներին

Եթե աղբահանության և կոշտ թափոնների տեղական կառավարման պլանը մշակվում է առաջին անգամ, ապա այս ենթաբաժինը պետք է բաց թողնվի:

Պլանի իրականացման արդյունքները գնահատվում են թափոնների գործածության յուրաքանչյուր տեսակի և թափոնի յուրաքանչյուր տեսակի համար՝ տարբեր գունավորումներով: Ընդ որում աղբավայր հեռացվող և տեղադրվող, այդ թվում և սանիտարական աղբավայր, թափոնների քանակը կայուն կառավարման ամենակարևոր ցուցանիշներից է, որի նվազեցումը պետք է դիտարկվի առաջնահերթ խնդիր: Աղյուսակում որպես օրինակ մի քանի վանդակներ գունավոր նշվել են և տրված է բացատրությունը:

- եթե աղբահանության և կոշտ թափոնների կառավարման համակարգն արդեն իսկ հասել է սահամնված նպատակին՝ սահմանված չափաքանակի 90-100%-ը
- եթե աղբահանության և կոշտ թափոնների կառավարման համակարգն ունակ է հասնելու սահամնված նպատակին՝ սահմանված չափաքանակի 30-89%-ը
- եթե աղբահանության և կթշտ թափոնների կառավարման համակարգն ունակ չէ հասնելու սահամնված նպատակին՝ սահմանված չափաքանակի 0-29%-ը

Աղյուսակ 24

Թափոնի տեսակ	Թափոնի առաջացում 1 շնչի հաշվով (կգ/տարի/մարդ)	Թափոնի ընդհանուր քանակ (հազ տ/տարի)	Խառը հավաքում (% ընդհանուր քանակից)	Տեսակավորված հավաքում (% ընդհանուր քանակից)	Տեղափոխում (% ընդհանուր քանակից)	Վերօգտագործում /կրկնաօգտագործում (% ընդհանուր քանակից)	Վերամշակում/օգտահանում (% ընդհանուր քանակից)	Վնասազերծում/վերացում (% ընդհանուր քանակից)	Տեղադրում ոչ սանիտարական աղբավայրում (% ընդհանուր քանակից)	Տեղադրում սանիտարական աղբավայրում (% ընդհանուր քանակից)
Կոշտ կենցաղային թափոն			95						60	
Խոշոր եզրաչափերի թափոն										
Շինարարական աղբ										
Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն				10						
Անվադողեր										
Փաթեթավորում և փաթեթվածք				50						
Էլեկտրական և էլեկտրոնային թափոն										
Կենսաբանական թափոն										
Վտանգավոր թափոններ										

24-րդ աղյուսակի լրացման բացատրագիր

Աղյուսակ 24-ում պայմանականորեն լրացված տվյալները ցույց են տալիս, որ համայնքում չտեսակավորված կենցաղային թափոնների հավաքումն իրականացվում է 95%-ով, որը նախկինում սահմանված թիրախն է, տեսակավորված փաթեթավորման/փաթեթվածքի հավաքումը լիարժեք չի իրականացվում, բայց հնարավոր է սահմանված թիրախներն ապահովել, իսկ շահագործման ոչ պիտանի մեքենաների դեպքում՝ թափոնների կառավարման գործող համակարգի և կիրառվող Պլանի պարագայում դեռևս հնարավոր չէ ապահովել օգտահանման սահմանված չափաքանակը:

բ. Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ներկայիս համակարգի արդյունավետության գնահատում

Օգտվելով նախորդ բաժինների վերլուծություններից՝ այս ենթաբաժնում վերլուծվում է և գնահատվում է Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման համակարգի արդյունավետությունը, և որքանով են արդյունավետ վարչական և կազմակերպչական կառուցվածքը և որոնք են արդյուանավետության վրա բացասաբար ազդող հիմնական պատճառները:

Աղյուսակ 25

Դերակատար	Արդյունավետության մակարդակ 1-շատ ցածր, 2-ցածր, 3-միջին, 4-բարձր, 5-գերազանց	Արդյունավետության հիմնական պատճառները	Արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ կամ փոփոխություններ	Նշումներ
ՏԻՄ և ՏԿՄ				
Մասնավոր հատված				
Բնակչություն				
Քաղաքացիական կազմակերպություններ				

գ. Իրավախախտումների վերլուծություն

Մշտադիտարկման և հաշվետվողականության կարևոր գործիք է նաև իրավախախտումների վերաբերյալ տեղեկատվության ամփոփումն ու վերլուծությունը, որը պետք է արտացոլվի աղյուսակ 26-ում. Նկարագրվում են պլանավորման տարածքում աղբահանության և կոշտ թափոնների կառավարմանն առնչվող իրավախախտումները: Պետք է նշել պատասխանատվության տեսակը՝ կարգապահական, վարչական, քրեական և ինչպես է լուծվել հարցը:

Աղյուսակ 26

հ/հ	Իրավախախտում	Իրավախախտման արձանագր. ամսաթիվ	Իրավախախտման սուբյեկտ /ֆիզիկական անձ/ կազմակերպություն/	Պատասխանա-տվության տեսակ	Իրավախախտ-ման պատճառ/ բացատրություն	Նշումներ /ինչպես է լուծվել հարցը, համայնքի պահանջը բավարարվբել է, թե ոչ և այլն/
1						
2						

դ. Տվյալների բացերի վերլուծություն

Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման համար հավաստի տվյալների առկայությունն ունի առաջնային նշանակություն: Կազմվող աղբահանության և կոշտ թափոնների կառավարման պլանը մի կողմից արձանագրում է անհրաժեշտ տվյալների բացակայությունը «Առկա իրավիճակի» գլխում, մյուս կողմից նախատեսում է համապատասխան գործողություններ՝ ուղղված բացակայող տվյալների լրացմանը: Կարևոր է նաև վերլուծել բացակայող տվյալների պատճառները: Սույն ենթաբաժնի վերլուծությունը կապահովվի բացակայող տվյալների հավաքման ընթացակարգերի ու կարողություններ բարելավմանն ուղղված միջոցառումների պլանավորումը:

Աղյուսակ 27

Տվյալի տեսակ	Հավաքագրվում է, թե ոչ (այո/ոչ)	Հասանելի է, թե ոչ (այո/ոչ)	Հավաստի է, թե ոչ (այո/ոչ)	Նշումներ

ե. Ներկայիս նպատակներին առնչվող փոփոխությունների նախնական ցանկ

Եթե Պլանը մշակվում է առաջին անգամ, ապա այս ենթաբաժինը պետք է բաց թողնվի:

Սույն բաժնում պետք է նախնական ձևով նկարագրվեն փոփոխությունները, որոնք անհրաժեշտ են աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ներկայիս համակարգում, որպեսզի իրագործվեն նախկինում սահմանված նպատակները, մանսավորապես պլանավորման տարածքում

- գոյացող թափոնների քանակի նախատեսված կրճատում,
- վերամշակված, օգտահանված թափոնների քանակի նախատեսված ավելացում,
- հակասանիտարական ձևով հեռացված թափոնների քանակի նախատեսված կրճատում

Նպատակ	Անհրաժեշտ փոփոխություններ աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ներկայիս համակարգում	Նշումներ
Գոյացող թափոնների քանակի նվազեցում		
Վերամշակված և/կամ օգտահանված թափոնների քանակի ավելացում		
Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություններով հեռացված թափոնների քանակի կրճատում		
Հողերի աղտոտման նվազեցում		
Ստորգետնյա և մակերևույթային ջրերի աղտոտման նվազեցում		
Օդի աղտոտման նվազեցում		
Ջերմոցային գազերի արտանետումների կրճատում		
Առողջապահական վնասակար ազդեցությունների նվազեցում		
Աշխատանքի անվտանգության պայմանների բարելավում		

ԳԼՈՒԽ 2. ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Բովանդակություն

1) Կանխատեսումներ և կանխադրույթներ
2) Նպատակների և թիրախների սահմանում
3) Գործողությունների պլան
4) Երկարաժամկետ զարգացում
5) Պլանավորված գործողությունների իրագործման համար պահանջվող բյուջե և ֆինանսավորում
6) Թափոնների կառավարման բյուջետավորում

1) ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱԴՐՈՒՅԹՆԵՐ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ա. Կանխատեսումներ

Սույն բաժնում անհրաժեշտ է նկարագրել պլանավորվող տարածքում Պլանի գործողության ընթացքում կանխատեսվող կամ նախատեսվող փոփոխությունները: Անհրաժեշտության դեպքում կարող են ավելացվել շարքեր համապատասխան համարակալումով:

Աղյուսակ 29

Կանխատեսելի փոփոխություններ	2024	2025	2026	2027	2028	Նշումներ
Փաստացի բնակչության ակնկալվող թիվ						
Տնտեսական ակնկալվող փոփոխություններ						
Սպառողական ապրանքների տեսակների և պահանջարկի ակնկալվող փոփոխություններ						
Թափոնների գոյացման աղբյուրների ակնկալվող փոփոխություններ						
Թափոնների վերամշակման/օգտահանման ակնկալվող կայանքներ						
Թափոնների հեռացման վայրերի փոփոխություններ՝ սանիտարական աղբավայրեր, փոխաբեռնման կայաններ						
Քաղաքականության փոփոխություններից ակնկալվող ազդեցություններ /կանխարգելման, կրճատման, տեսակավորման և վերաօգտագործման մասով/						

բ. Կանխադրույթներ

Կանխադրույթները սահմանվում են՝ հիմք ընդունելով նախորդ գլխում առկա իրավիճակի վերլուծությունը, բացահայտված հիմնախնդիրները, առաջնահերթությունները և տեսլականը, ինչպես նաև <<ա.>> ենթակետում կատարված կանխատեսումները: Օրինակ՝ նշված փոփոխություններից կարող է պարզվել, որ Պլանավորման տարածքի որոշ բնակավայրերում կամ ոլորտներում սպասվում է փոփոխություն, որը բերելու է այս կամ այն տեսակի թափոնների քանակական և որակական փոփոխության, ինչը հիմք կհանդիսանա կանխատեսվող աղբի քանակը կառավարելու համար պահանջվող կարողությունների /հավաքման, տեսակավորման, վերամշակման և այլն/ փոփոխության անհրեշտությունը գնահատելու համար:

Սույն ենթաբաժնում ներկայացվում է պլանավորման ժամակաշրջանում ակնկալվող թափոնների գոյացման ցուցանիշների գնահատման հիմնավորումը: Անհրաժեշտ է գնահատել և նշել թափոնների հիմնական տեսակների առաջնահերթության աստիճանը և դրանց գոյացման կանխատեսելի քանակը: Պլանավորման ժամանակաշրջանում ակնկալվող թափոնների մեկ շնչի հաշվով գոյացումը հաշվարկելիս հիմք է ընդունվում 29-րդ աղյուսակում նշված բնակչության կանխատեսված թիվը:

հ/հ	Թափոնի տեսակ	Գործածության առաջնահերթություն (բարձր, միջին, ցածր)	Թափոնի ակնկալվող գոյացում՝ մեկ շնչի հաշվով (կգ/տարի/մարդ)	Թափոնի ակնկալվող գոյացում՝ ընդհանուր քանակ (հազ տ/տարի)	Նշումներ
1	Կոշտ կենցաղային թափոն, այդ թվում՝				
	օրգանական				
	թուղթ, ստվարաթույթ				
	պլաստիկ				
	ապակի				
	մետաղ				
	այլ (նշել ըստ անհրաժեշտության)				
2	Խոշոր եզրաչափերի թափոն				
3	Շինարարական աղբ				
4	Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն				
5	Անվադողեր				
6	Փաթեթավորում և փաթեթվածք				
7	Էլեկտրական և էլեկտրոնային թափոն				
8	Կենսաբանական թափոն				
9	Այլ (նշել ըստ անհրաժեշտության)				

2) ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ (ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ և ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ)

Սույն բաժնում սահմանվում են աղբահանության և կոշտ թափոնների կառավարման նպատակները և թիրախները պլանավորման ժամանակաշրջանում: Այն պետք է ներառի նաև թափոնների քանակն ըստ գործածության ձևերի, պատասխանատվության բաշխումը մասնակիցների միջև, մասնակիցների կարողությունները, իրազեկվածության աստիճանը, տվյալների հավաքումը:

ա. Թափոնների կառավարման գլխավոր նպատակներն են՝

- <u>սկզբնաղբյուրում թափոնների առաջացման կրճատումը</u>
- <u>աղբավայրում (ներառյալ սանիտարական) տեղադրվող թափոնների քանակի կրճատումը</u>:

բ. Պետք է սահմանվեն նաև թափոնների գործածության հետևյալ ձևերին առնչվող թիրախային ցուցանիշները՝

- տեսակավորված հավաքում
- խառը հավաքում և տեսակավորում
- վերամշակման և օգտահանման աճ
- վտանգավոր թափոնների վնասազերծման ու չեզոքացման կրճատում
- աղբավայրում, այդ թվում՝ սանիտարական աղբավայրում տեղադրվող թափոնների քանակի կրճատում:

- Եթե պլանավորման տարածքում ներկայումս աղբի հավաքման ծածկույթը 100% չէ, ասյինքն կա բնակչության որոշակի մաս, օրինակ 25%, որը դեռևս չի ստանում աղբի հավաքման ծառայություն, ապա պարտադիր պետք է սահմանել նպատակը, օրինակ՝ 2 տարվա ընթացքում աղբի հավաքման ծառայություն ստացող բնակչության տոկոսը 75%-ից հասցնել 90%-ի , իսկ 1 տարի անց ՝ 100%-ի:
- Եթե համայնքում, զբոսաշրջային ակտիվությամբ պայմանավորված, չտեսակավորված կենցաղային թափոնների կազմում մեծ է պլաստիկի ու ապակե տարաների քանակը, որից տեսակավորում և օգտահանում ընդհանրապես չի իրականացվում, ուստի թիրախ է սահմանվել՝ ապահովել պլաստիկի և ապակու տեսակավորված հավաքում (օրինակ՝ 20% յուրաքանչյուրի ընդհանուր քանակից) առաջիկա 2 տարիների ընթացքում */կարճաժամկետ պլանավորում/*, իսկ առաջիկա 5 տարիների ընթացքում՝ նշված տեսակների տեսակավորված հավաքումը հասցնել 50%-ի յուրաքանչյուրի ընդհանուր քանակից և ապահովել հավաքված ամբողջ քանակի վերօգտագործում կամ նյութի օգտահանում */միջնաժամկետ պլանավորում/.*
- Եթե համայնքի առանձնահատկություններից ելնելով՝ առաջացած թղթի/ստվարաթղթի, անվադողերի և շինարարական աղբի քանակը համեմատաբար փոքր է, սակայն դրանց տեսակավորված հավաքումը համայնքը համարել է միջին առաջնահերթություն և սահմանել թիրախ՝ առաջիկա 5 տարիների ընթացքում ապահովել դրանց 50%-ի (յուրաքանչյուրի ընդհանուր քանակից) տեսակավորված հավաքում և ապահովել հավաքված ամբողջ քանակի վերակիրառում (օրինակ՝ շինարարական աղբով աղբավայրի ծածկում), նյութի օգտահանում (օրինակ՝ թղթի/ստվարաթղթի վերամշակում) կամ վերացում (օրինակ՝ անվադողերի կիզում) */միջնաժամկետ պլանավորում/*:

Հարկ է նշել, որ թիրախներ սահմանելիս, անհրաժեշտ է նաև նշում կատարել դրանց հասնելու համայնքի կարողությունների մասին՝ եթե համայնքի կարողությունները բավարար են՝ կանաչ գույնով, եթե բավարար չեն՝ կարմիր գույնով:



-Աղբահանության և ԿԹ կառավարման համակարգի կարողությունները <u>բավարար են</u> սահմանված թիրախին հասնելու համար

-Աղբահանության և ԿԹ կառավարման համակարգի կարողությունները <u>բավարար չեն</u> սահմանված թիրախին հասնելու համար

Կարճաժամկետ թիրախներ և դրանց հասնելու կարողություններ

Աղյուսակ 31

h/h	Թափոնի տեսակ	Գործածության առաջնահերթություն (բարձր, միջին, ցածր)	Թափոնի ակնկալվող գոյացում՝ 1 շնչի հաշվով (կգ/տարի/մարդ)	Թափոնի ակնկալվող գոյացում՝ ընդհ. քանակ կոմունալ (հազ տ/տարի)	Թափոնների գործածության ***կարճաժամկետ*** թիրախներ և դրանց հասնելու կարողություններ **/2024-2026 թվականներ/**										Նշումներ
					1	2	3		5	6	7	8	9	10	
					Խառը, չտեսակավորված հավաքում (% ընդհանուր քանակից)	Տեսակավորված հավաքում (% ընդհանուր քանակից)	Տեղափոխում (% ընդհանուր քանակից)	Վերօգտագործում /կրկնաօգտագործում(% ընդհանուր քանակից)	Վերամշակում, օգտահանում (% ընդհանուր քանակից)						
									Վերամշակում, օգտահանում որպես երկրորդային ռեսուրս (% ընդհանուր քանակից)	Մանրամասնության և այգիների թափոնների օգտահանում /կոմպոստացում (% ընդհանուր քանակից)	Էներգիայի օգտահանում /կենսագազ, բիոկեռ, բիոդիզել, RDF/ (% ընդհանուր քանակից)	Վերամշակում/չեզոքացում (% ընդհանուր քանակից)	Տեղադրում ոչ սանիտարական թափոնաբեռնարան (% ընդհանուր քանակից)	Տեղադրում սանիտարական թափոնաբեռնարան (% ընդհանուր քանակից)	
1	Կոշտ կենցաղային թափոն, այդ թվում՝														
	թուղթ, ստվարաթույթ														
	պլաստիկ														
	ապակի														
2	Խոշոր եզրաչափերի թափոն														
3	Շինարարական աղբ														
4	Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն														
5	Անվադողեր														
6	Փաթեթավորում և փաթեթվածք														
7	Էլեկտրական և էլեկտրոնային թափոն														
8	Կենսաբանական թափոն														
9	Այլ (նշել ըստ անհրաժեշտության)														

Միջնաժամկետ թիրախներ և դրանց հասնելու կարողություններ

Աղյուսակ 32

հ/հ	Թափոնի տեսակ	Գործունեության առաջնահերթություն (բարձր, միջին, ցածր)	Թափոնի ակնկալվող գույացում՝ 1 շնչի հաշվով (կգ/տարի/նախագիծ)	Թափոնի ակնկալվող գույացում՝ ընդհ. քանակ (հազ տ/տարի)	Թափոնների գործածության ***կարճաժամկետ*** թիրախներ և դրանց հասնելու կարողություններ **/2026-2028 թվականներ/**										Նշումներ
					1	2	3		5	6	7	8	9	10	
					Խառը, չտեսակավորված հավաքում (% ընդհանուր քանակից)	Տեսակավորված հավաքում (% ընդհանուր քանակից)	Տեղափոխում (% ընդհանուր քանակից)	Վերօգտագործում /կրկնաօգտագործում (% ընդհանուր քանակից)	Վերամշակում, օգտահանում (% ընդհանուր քանակից)						
									Վերամշակում, օգտահանում որպես երկրորդային ռեսուրս	Սմնդանդության և այգիների թափոնների օգտահանում /կոմպոստացում (% ընդհանուր քանակից)	Էներգիայի օգտահանում /կենսագազ, բիոդիզել, RDF/ (% ընդհանուր քանակից)	Վնասազերծում/չեզոքացում (% ընդհանուր քանակից)	Տեղադրում ոչ ստանդարտ ամբարներում (%	Տեղադրում ստանդարտ ամբարներում (% ընդհանուր քանակից)	
1	Կոշտ կենցաղային թափոն, այդ թվում՝														
	թուղթ, ստվարաթույթ														
	պլաստիկ														
	ապակի														
2	Խոշոր եզրաչափերի թափոն														
3	Շինարարական աղբ														
4	Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն														
5	Անվադողեր														
6	Փաթեթավորում և փաթեթվածք														
7	Էլեկտրական և էլեկտրոնային թափոն														
8	Կենսաբանական թափոն														
9	Այլ (նշել ըստ անհրաժեշտության)														

գ. Պատասխանատվության բաշխումը պլանավորման ժամանակահատվածում

Պլանավորման ժամանակահատվածում թիրախները սահմանելուց հետո անհրաժեշտ է վերանայել Պլանի մասնակիցների պատասխանատվության սահմանները (Աղյուսակ 16-ի վերանայում)՝ սահմանել այդ ժամանակահատվածում ակնկալվող «դերերը» և «պատասխանատվությունները»: Այս ենթաբաժնում պետք է լրամշակվի 1-ին գլխում ներկայացված 16-րդ աղյուսակը:

- **Պլանի մեջ շահակիրների ներգրավվածության աստիճանը**

Աղյուսակ 33

Պատասխանատուներ	Իրազեկության բարձրացում (%)	Խառը հավաքում (%)	Տեսակավորված հավաքում (%)	Տեղափոխում (%)	Տեսակավորում /գործարանային/ (%)	Վերամշակում /կոմպոստագործում (%)	Վերամշակում և/կամ օգտահանում (%)	Վտանգավոր թափոնների վնասազերծում/ վերացում (%)	Տեղադրում աղբավայրում (%)
ՏԻՄ									
Մանսավոր հատված									
Արտադրող									
Բնակչություն									
Քաղաքացիական կազմակերպություն									

33-րդ աղյուսակի լրացման բացատրագիր

Աղյուսակ 33-ում Հաշվի առնելով պատասխանատվության բաշխման փաստացի նկարագիրը և Պլանով սահմանված թափոնների գործածության թիրախները՝ համայնքը սահմանում է պատասխանատվության բաշխման նոր թիրախներ՝ պլանավորման ժամանակահատվածի համար: Ըստ այդմ, իրազեկվածության բարձրացման ծրագրեր իրականացնում են ինչպես ՀԿ-ները, այնպես էլ ՏԻՄ-ը (օրինակ՝ ՏԻՄ-ը համայնքային կազմակերպություններում, ՀԿ-ները՝ տարբեր ոլորտի տնտեսավարողների շրջանում), աղբի չտեսակավորված հավաքման համար պատասխանատու է ՏԻՄ-ը, տեսակավորված հավաքման համար՝ ՏԻՄ-ը, մասնավոր ոլորտը, արտադրողները և բնակչությունը (օրինակ՝ ՏԻՄ-ը տեսակավորված հավաքում է շինարարական աղբը, իսկ մասավոր ոլորտը և արտադրողները՝ իրականացնում են փաթեթավորման/փաթեթվածքի, պլաստիկի, մետաղական ու ապակե շշերի, տարաների տեսակավորված հավաքում՝ հետագա վերօգտագործման նպատակով), տեղափոխման համար՝ ՏԻՄ-ը, մասնավոր ոլորտը և արտադրողը, գործարանային տեսակավորում իրականացնում են արտադրողները, վերօգտագործում՝ արտադրողները և բնակչությունը, տեղադրում աղբավայրում՝ ՏԻՄ-ը:

- **Դերերի բաշխում պլանավորման ժամանակահատվածում՝ ըստ թափոնների տեսակների և գործածության ձևերի**

Պլանավորման ժամանակահատվածում պատասխանատվության բաշխման հետ մեկտեղ, անհրաժեշտ է իրականացնել դերերի բաշխում՝ ըստ թափոնների տեսակների և գործածության ձևերի՝ նշելով սյունակներում համապատասխանաբար ՝ ՏԻՄ, ՄՀ, Արտ, Բն, ՔԿ:

Աղյուսակ 34

Պատասխանատուներ	Իրազեկվածություն բարձրացում (%)	Շտեսակավորված հավաքում (%)	Տեսակավորված հավաքում (%)	Տեղափոխում (%)	Տեսակավորում /գործարանային/ (%)	Վերօգտագործում (%)	Վերակիրառում (%)	Նյութի օգտահանում (%)	Էներգիայի օգտահանում (%)	Կոմպոստացում (%)	Վնասազերծում/ վերացում (%)	Տեղադրում առբակոյում (%)
Կոշտ կենցաղային թափոն												
Խոշոր եզրաչափերի թափոն												
Շինարարական աղբ												
Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն												
Անվադողեր												
Փաթեթավորում և փաթեթվածք												
Էլեկտրական և էլեկտրոնային թափոն												
Կենսաբանական թափոն												
Այլ (ըստ անհրաժեշտության)												

դ. Անձնակազմի կարողությունների զարգացում պլանավորման ժամանակաշրջանում

Սույն ենթաբաժնում, համաձայն նոր պլանավորման, լրամշակվում է 18-րդ աղյուսակը, ընդ որում առաջին սյունակը պետք է լրացվի աղյուսակ 17-ից և պետք է սահմանվի հմտությունների թիրախային մակարդակը:

Աղյուսակ 35

Հմտություն/ ոլորտ	Համապատասխան գիտելիքներ ու հմտություն ունեցող աշխատակիցների թիվը	Գիտելիքների ու հմտությունների ներկայիս մակարդակ (1-շատ ցածր, 2-ցածր, 3-միջին, 4-բարձր, 5-գերազանց)	Գիտելիքների ու հմտությունների թիրախային ապագա մակարդակ (1-շատ ցածր, 2-ցածր, 3-միջին, 4-բարձր, 5-գերազանց)	Նշումներ
Թափոնների կառավարման գիտելիքներ				
ՀՀ օրենսդրության իմացություն				
Տվյալների հավաքագրում				
Համակարգչային քարտեզագրում				
Գնումների կազմակերպում				
Պայմանագրերի կառավարում				
Գործառնական հմտություններ				
Ֆինանսական վերլուծության իմացություն				

Ե. Հանրային իրազեկություն պլանավորման ժամանակաշրջանում

Այս ենթաբաժնում պետք է աղյուսակ 19-ի հիման վրա մշակվեն իրազեկվածության թիրախային ցուցանիշները:

Աղյուսակ 36

Բնագավառ կամ ոլորտ	Իրազեկվածության ներկայիս մակարդակ (1-շատ ցածր, 2-ցածր, 3-միջին, 4-բարձր, 5-գերազանց)	Իրազեկվածության թիրախային ապագա մակարդակ (1-շատ ցածր, 2-ցածր, 3-միջին, 4-բարձր, 5-գերազանց)	Նշումներ
1. Թափոնների կառավարման վերաբերյալ առկա գիտելիքների աղբյուրներ			
2. Թափոնների կառավարման վերաբերյալ տեղեկացվածություն			
Թափոնների թերի կառավարման բնապահպանական ազդեցությունները			
Թափոնների թերի կառավարման սոցիալական ազդեցությունները			
Թափոնների թերի կառավարման տնտեսական ազդեցությունները			
Թափոնները աղբավայր հեռացնելու ազդեցությունները			

Թափոնների հիերարխիայի իմացություն			
Օրենսդրության խրախուսող գործիքներ			
Օրենսդրության պատժիչ գործիքներ			
Թափոնների կառավարման ոլորտում իրականացվող բնապահպանական ծրագրեր			
3. Թափոնների կայուն կառավարման վերաբերմունք և ակնկալիքներ			
Թափոնների կայուն կառավարման կարևորությունը			
Թափոնների տեսակավորման օգուտները			
Թափոնների վերօգտագործման օգուտները			
Թափոնների վերամշակման, օգտահանման օգուտները			
Իրազեկվածության արշավների օգուտները			

զ. աղբահանության և թափոնների գործածության քարտեզ՝ ըստ նոր պլանավորման

Սույն ենթաբաժնում պարտադիր պետք է 1-ին գլխի 5-րդ կետի «**Աղբահանության և թափոնների գործածության քարտեզ**» ենթաբաժնում մշակված քարտեզը վերանայվի և լրամշակվի՝ համաձայն նոր պլանավորման: Լրամշակված նոր քարտեզի հետ մեկտեղ այս ենթաբաժինը կարող է ներառել նաև անհրաժեշտ տեքստային նկարագրություններ:

3) ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ (ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ)

Սույն բաժնում մշակվում և ներկայացվում են 2-րդ գլխի 2-րդ կետում սահմանված նպատակների և թիրախներին հասնելու համար անհրաժեշտ միոցառումները, որոնք կարող են վերաբերել կազմակերպչական և ենթակառուցվածքային փոփոխություններին: Ստորև ներկայացվում են մի քանի օրինակներ.

<u>ա. Աղբի տեսակավորված հավաքման կարողություններ</u>

Վերամշակում իրականացնող ընկերություններին և ներդրողներին ներգրավելու համար կարևոր է որպեսզի համայնքում գործի թափոնների տեսակավորված հավաք: Անհրաժեշտ է ներդնել տեսակավորման սխեմաներ, որոնք հարմարեցված կլինեն համայնքում գոյացող թափոնների կազմին, քանակին և այլ առանձնահատկություններին և զուգահեռ անհրաժեշտ է աշխատել հանրային իրազեկման բարձացման ուղղությամբ. Օրինակ, պլանավորել չտեսակավորված խառը աղբ հավաքող

շրջիկ մեքենաներով անցում օրացուցային տեսակավորված հավաքի սխեմաների՝ շաբաթվա որոշ օրերին հավաքելով միայն վերամշակելի /պլաստիկ, ապակի, թուղթ/ թափոնները, իսկ մնացած թափոնները խառը հավան իրականացնել ամեն օր կամ գրաֆիկով՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Կարևոր է նաև կենսաքայքայվող թափոնների առանձին տեսակավորված հավաքման աստիճանաբար ներդրումը, ինչն ավելի արդյուանվետ կդարձնի վերամշակելի թափոնների գործածությունը: Կարևորվում է նաև կոշտ կենցաղային թափոններում պարունակվող վտանգավոր թափոնների առանձնացված հավաքումը և հատուկ գործածության կազմակերպումը:

Հնարավոր է նաև արտադրության և սպասարկման ոլորտի տնտեսվարողների հետ փոխադարձ/փոխշահավետ պայմանավորվածություններ ձեռք բերել՝ հասարակության իրազեկմանն աջակցելու, տեսակավորված թափոնների հավաքումն իրականացնելու համար, տեսակավորման համար քաղաքացիների զեղչի կտրոնների տրամադրելու, բնակիչների և տնտեսվարողների համար աղբահանության վճարների զեղչային համակարգի ներդնելու ուղղությամբ, ինչպես նաև վերամշկման գործընթաց կազմակերպելու, տեսակավորված թափոններն այլ համայնքներում առկա վերամշակման կայանքներ տեղափոխելու համար (օրինակ՝ արտոնյալ պայմաններով տարածքների տրամադրում փոխաբեռնման կայանների, վերամշակման, սեղմման, բրիկետավորման կայանքների կառուցման համար) և այլն:

բ. Օպերատորների կարողություններ

Պլանավորման տարածքում թափոնների վերամշակման թիրախային ցուցանիշին հասնելու նպատակով անհրաժեշտություն կառաջանա օպերատորի փոփոխության կամ պայմանագրային պայմանների վերանայման: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտություն է առաջանում անձնակազմի վերապատրաստման, հանրային իրազեկվածության բարձրացման, լոգիստիկայի աղբահանության սխեմաների վերանայման և փոփոխության:

գ. Աղբի հավաքման կետեր

Անհրաժեշտ է նաև ստեղծել աղբի տարբեր տեսակների հավաքման կետեր, որտեղ բացի օպերատորից, նաև կազմակերպություններն ու քաղաքացիները կարող են բերել տեսակավորված աղբը՝ խոշոր եզրաչափի թափոն, փաթեթավորման թափոն, պլաստիկ թափոն, այգիների թափոն և այլն:

Միաժամանակ հնարավորությունների դեպքում կարելի է նաև ձեռք բերել օրինակ մանրացնող կամ սեղմիչ սարքավորումներ՝ պլաստիկ թափոնը սեղմենլու կամ մանրացնելու՝ տեղափոխման ծախսերը նվազեցնելու նպատակով:

Համայնքում նման սարքավորումների ձեռքբերումը և աղբի հավաքման կետերի ստեղծումը ևս կդառնա աղբահանության և կոշտ թափոնների կառավարման տեղական պլանավորման միջոցառում՝ ուղղված թափոնների վերամշակման թիրախային ցուցանիշներին հասցնելուն:

դ. Փոխաբեռնման կայաններ

Աղբահանության սխեմաների կազմման ժամանակ հնարավոր է նաև այն իրականացնել փոխաբեռնման կայանների միջոցով, որտեղ ժամանակավոր հավաքվում, սեղմվում և/կամ տեսակավորվում է աղբը/, ինչն իր հերթին կնվազեցնի երթևեկության ծանրաբեռնվածությունը և ծախսերը: Փոխաբեռնման կայանների ստեղծումը պետք է դիտարկվի աղբավայրերի կառավարման համատեքստում: Փոխաբեռնման կայանների հետ կապված միջոցառումները մշակելիս պետք է հիմք ընդունվեն 1-ին գլխի 7-րդ կետում կատարված վերլուծությունները և 2-րդ գլխի 2-րդ կետում սահմանված թիրախները:

ե. Անձնակազմի կարողություններ

Պլանավորման տարածքում թափոնների տեսակավորման, վերամշակման, օգտահանման թիրախային ցուցանիշներին հասնելու համար անհրաժեշտ էեն թափոնների կայուն կառավարման բազային գիտելինքեր և գործառնական հմտություններ: Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման համար պատասխանատու անձնակազմի կարողությունների զարգացումը դասընթացների, վերապատրաստումների, հավաստագրման և այլ միջոցներով աղբահանության և կոշտ թափոնների տեղական կառավարման պլանավորման առանցքային բաղադրիչներից է: Անձնակազմի կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումնեը մշակելիս պետք է հիմք ընդունվեն 1-ին գլխի 7-րդ կետում արված վերլուծությունը և 2-րդ գլխի 2-րդ կետում սահմանված թիրախները:

<u>զ. Տվյալների հավաքում</u>

Աղբահանության և կոշտ թափոնների կայուն կառավարման համար հավաստի տվյալների առկայությունն ունի առաջնային նշանակություն: Պլանը արձանագրում է անհրաժեշտ տվյալների բացերը առկա իրավիճակի գնահատման բաժնում (Աղյուսակ 27) : Մյուս կողմից որոշ տվյալներ կարող

են բացակայել նաև նոր սահմանված թիրախների մասով, հետևաբար պլանավորման ժամանակաշրջանում պետք է նախատեսել դրանց հավաքման ընթացակարգերի և կարողությունների բարելավմանն ուղղված միջոցառումներ: Տվյալների հավաքման հետ կապված միջոցառումները մշակելիս պետք է հիմնք ընդունվեն 1-ին գլխի 7-րդ կետում կատարված վերլուծությունը և 2-րդ գլխի 2-րդ կետում սահմանված թիրախները:

է. Աղբավայրեր և աղբանոցներ

Աղբահանության և կոշտ թափոնների տեղական կառավարման բարելավումը ներառում է նաև գործող աղբավայրերի և դրանց առնչվող ենթակառուցվածքների բարելավումը: Օրինակ աղբավայր հեռացվող թափոնների քանակի հստակ տվյալներ ունենալու համար, այդ թվում՝ ընդհանուր աղբի գոյացման տվյալների և ֆինասնատնտեսական վերլուծությունների համար անհրաժեշտ է աղբավայրերում տեղադրել կշեռքներ: Անհրաժեշտ է նաև բաերկարգել աղբավայրը՝ ցանկապատելով՝ ինչը կարգելի կողմնակի անձանց, ինչպես նաև կենդանիների մուտքը աղբավայր, բարեկարգել աղբավայր տանող ճանապարհները՝ մեքենամեխանիզացիայի ապահով շահագործումն ապահովելու նպատակով: Աղբավայրում կատարել տեղադրվող աղբի հաշվառում, ներդնել թափոների ընդունման և մերժման ընթացակարգեր և ենթակառուցվածքներ:

Աղբավայրի և աղբանոցների կառավարման հետ կապված միջոցառումները մշակելիս պետք է հիմք ընդունել 1-ին գլխում արված վերլուծությունը և 2-րդ գլխի 2-րդ կետում սահմանված թիրախը:

ը. Ոչ ֆորմալ հատված

Պլանավորրման ժամկանահատվածում հնարավոր է աշխատանքներ տանել ոչ ֆորմալ հատվածի հետ աղբահանության և կոշտ թափոնների կայուն կառավարման մեջ ներգարվելու ուղղությամբ, օրինկ՝ թափոնների տեսակավորման ընթացակարգերը և ենթակառուցվածքները բարելավելու համատեքստում: Սա վերաբերում է նաև արդյունաբերական հոսքում եղած փաթեթավորման թափոններին, որոնց գործածության մեջ ոչ ֆորմալ հատվածը մեծ դեր ունի:

Տվյալների հավաքման համար հետ կապված միջոցառումները մշակելիս պետք է հիմք ընդունել 1-ին գլխում արված վերլուծությունը և 2-րդ գլխի 2-րդ կետում սահմանված թիրախները:

Թիրախներին համապատասխան միջոցառումները պետք է լրացվեն Աղյուսակ 37-ում:

Գործողությունների պլան՝ կարճաժամկետ և միջնաժամկետ թիրախներին հասնելու համար

Աղյուսակ 37

h/h	Նպատակը՝ ըստ գործածության ձևերի	Կարճաժամկետ թիրախ	Կարճաժամկետ միջոցառում (2024-2026թթ.)	Միջնաժամկետ թիրախ	Միջնաժամկետ միջոցառում (2026-2028թթ.)	Նշումներ
I	Խառը հավաքում					
II	Տեսակավորված հավաքում					
III	Վերօգտագործում, կրկնաօգտագործում					
IV	Վերամշակում, օգտահանում					
	Վերամշակում, օգտահանում որպես երկրորդյային ռեսուրս					
	Սննդանյութի և այգիների թափոնների օգտահանում /կոմպոստացում					
	Էներգիայի օգտահանում /կենսագազ, բրիկետ, բիոդիզել,/					
V	Վնասազերծում/չեզոքացում					
VI	Տեղադրում սանիտարական աղբավայրում					
VII	Տեղադրում ոչ սանիտարական աղբավայրում					

4) ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Պլանի մշակման ժամանակ կարճաժամկետ և միջնաժամկետ թիրախներ սահմանելիս անհրաժեշտ է դրանք դիտարկել երկարաժամկետ զարգացման համատեքստում՝ թափոնների կառավարման կայունությունը երաշխավորելու նպատակով: Այդ իմաստով ՏԻՄ-երի Պլանով սահմանված բոլոր թիրախները պետք է բխեն ՀՀ կառավարության կողմից որդեգրած քաղաքականությունից՝ աղբահանության համակարգի ռազմավարությունից՝ միաժամանակ չսահմանափակվելով՝ երկարաժամկետ զարգացումների համար կարգավորման առաջարկություններ ներկայացնելու անհրաժեշտության դեպքում:

Ցանկացած Պլան պետք է բացի կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորումից դիտարկել ավելի լայն հորիզոն ենթադրող հեռանկար, քանի որ, օրինակ՝ թափոնների վերամշակման և օգտահանման նոր կայանքներ ստեղծելու, նոր սսանիտարական աղբավայր կառուցելու ընթացակարգերը ժամանակատար են. անհրաժեշտ է տեխնիկատնտեսական ուսումնասիրություն, այնուհետև թույլտվությունների ստացում, լիցենզավորում, Շրջակա միջավայրի ազդեցության և սոցիալական ազդեցության գնահատումներ, հանրային լսումների փուլեր և այլ գործողություններ: Պլանավորումը երկարաժամկետ հեռանկարում դիտարկելը կարևոր է նաև ֆինանսատնտեսկան առումով:

Աղյուսակ 38

Թափոնների գործածության համար նախատեսվող կայանք	Թափոնի տեսակ	Կայանքի հզորություն, տ/ տարի	Շահագործման նախատեսվող մեկնարկի տարեթիվը	Անհրաժեշտ ուսումնասիրություն	Նշումներ

5) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԲՅՈՒՋԵ

Սույն բաժնում ներկայացվում են Աղյուսակ 37-ում սահմանված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները և դրանց աղբյուրները՝ կարճաժամկետ և միջնաժամկետ կտրվածքով: Այն ամփոփվում է Աղյուսակ 39-ում և 40-ում.

ա. Կարճաժամկետ միջոցառումների բյուջե և ֆինանսավորում

Աղյուսակ 39

հ/հ	Սահմանված թիրախ	Միջոցառման անվանում	Միջոցառման արժեք (հազ. դր.)	Ծախսերն ըստ պլանավորման կարճաժամկետ ժամանակահատվածի համար		Ծրագրի ֆինանսավորման աղբյուրներ					Նշումներ
				1-ին տարի (հազ. դր.)	2-րդ տարի (հազ. դր.)	Ինքնածախսա-ծածկում (հազ.դր.)	Համայնքային բյուջե (հազ. դր.)	Պետական բյուջե (հազ. դր.)	Դոնոր կազմակերպություն (հազ. դր.)	Օպերատորի/ՀՈԱԿ-ի բյուջե (հազ. դր.)	
1											
2											
3											
4											
....											
	Ընդամենը										

բ. Միջնաժամկետ միջոցառումների բյուջե և ֆինանսավորում

Աղյուսակ 40

հ/հ	Սահմանված թիրախ	Միջոցառման անվանում	Միջոցառման արժեք (հազ. դր.)	Ծախսերն ըստ պլանավորման միջնաժամկետ ժամանակահատվածի համար			Ծրագրի ֆինանսավորման աղբյուրներ					Նշումներ
				3-րդ տարի (հազ. դր.)	4-րդ տարի (հազ. դր.)	5-րդ տարի (հազ. դր.)	Ինքնաձ ախսա-ծածկում (հազ. դր	Համայնքա յին բյուջե (հազ. դր.)	Պետակա ն բյուջե (հազ. դր.)	Դոնոր կազմակե րպություն (հազ. դր.)	Օպերատ որի/ ՀՈԱԿ-ի բյուջե (հազ. դր.)	
1												
2												
3												
4												
....												
	Ընդամենը											

գ. Առանձին միջոցառումների մանրամասն աշխատանքային պլան և բյուջե

Աղյուսակ 41

Միջոցառում	Կապիտալ ներդրումներ	Գործառնական ծախսեր	Այլ ծախսեր /մանրամասնել նշումների մեջ/	Նշումներ

6) ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ

ա. Եկամուտների և ծախսերի ընդհանուր նկարագրության պլանավորման տարածքում նախատեսվող պլանավորման ժամանակաշրջանում

Աղյուսակ 42

Տարի	Բնակչության թիվ	Աղբահանության վարձավճար դրամ/անձ	Գործող տնտեսվարող սուբյեկտների թիվը	Աղբահանության համակարգում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների թիվը /աղբահանության պայմանագիր /	Վարձավճարների հավաքման ընդհանուր ծախսեր, դրամ/տարի	Աղբի հավաքման և տեղափոխման ծախս, դրամ/տարի	Աղբավայրում աղբի տեղադրման ծախս, դրամ/տոննա
1-ին տարի							
2-րդ տարի							
3-րդ տարի							
4-րդ տարի							
5-րդ տարի							

բ. Եկամուտ/Հավաքագրում և Ծախսեր

Պլանավորման տարածքում աղբահանության և թափոնների կառավարման նախատեսվող եկամուտներն ու ծախսերը պլանավորման տարիներին ներկայացվում է ստորև՝ 43-րդ աղյուսակում:

Աղյուսակ 43

Տարի	Աղբահանության եկամուտ/ հավաքագրում		Եկամուտ վերամշակման ենթակա թափոնների վաճառքից	Աղբահանության ծախս	Սանիտարական մաքրման ծախս
	Բնակչություն	Տնտեսվարող սուբյեկտներ			
1-ին տարի					
2-րդ տարի					
3-րդ տարի					
4-րդ տարի					
5-րդ տարի					

գ. Ընդհանուր եկամուտ և ծախս

Պլանավորման տարածքում աղբահանության և թափոնների կառավարման նախատեսվող եկամուտներն ու ծախսերի ընդհանուր պատկերը պլանավորման տարիներին ներկայացվում է 44-րդ աղյուսակում:

Աղյուսակ 44

	Եկամուտներ	Ծախսեր	Տարբերություն
1-ին տարի			
2-րդ տարի			
3-րդ տարի			
4-րդ տարի			
5-րդ տարի			

դ. Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման նախատեսված ինքնարժեքը՝ ըստ հիմնական հոսքերի

Կոշտ թափոնների կառավարման նախատեսված ինքնարժեքը՝ ըստ հիմնական հոսքերի պլանավորման ժամանակահատվածում ներկայացվում է 45-րդ աղյուսակում:

Աղյուսակ 45

	Կոշտ կենցաղային թափոն	Խոշոր եզրաչափերի թափոն	Շինարարական աղբ	Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն	Անվադողեր	Փաթեթավորում և փաթեթվածք	Էլեկտրական և էլեկտրոնային թափոն	Կենսաբանական թափոն	Վտանգավոր թափոններ
Աշխատուժ , դրամ/տարի									
Արտահագուստ և գործիքներ, դրամ /տարի									
Տեխնիկա շահագործում և պահպանում									
Վառելիքի ծախս									
Աղբամանների շահագործում և պահպանում									
Վարչական ծախսեր, դրամ/տարի									
Բնապահպանական հարկ									
Թափոնի գոյացում տոննա/տարի									
Մեկ անձի կողմից գոյացվող թափոնի քանակ /կգ/տարի									
Մեկ անձի հաշվով ինքնարժեք /դրամ.մարդ/									

ԳԼՈՒԽ 3. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Պլանավորման տարածքում հաշվետու ժամանակահատվածում առկա իրավիճակի գնահատման, պլանավորման և Պլանի իրականացման վերլուծությունների արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը անհրաժեշտության դեպքում ներկայացվում է աղբահանության ոլորտի լիազոր մարմնին՝ պլանավորման ժամանակաշրջանի 2-րդ և 4 –րդ տարիների ավարտին:

Տեղեկատվությունը ներառում է պլանավորման տարածքում Պլանին առնչվող բոլոր փաստաթղթերը, որոնք մշակվել են առկա իրավիճակի գնահատման, պլանավորման, սահմանված նպատակների և թիրախների իրագործման արդյունքների վերլուծության փուլերում: Տեղեկատվությունը պետք է ներառի նաև ընդհանուր տեղեկություններ, որտեղ պետք է նշվեն տեղեկատվության անվանումը, պալնավորման մեջ ընդգրկված համայնքների անվանումը, տեղեկատվությունը մշակող անձանց պաշտոնները, կոնտակտները:

1) ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԹԻՐԱԽՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

- Պլանում սահմանված կարճաժամկետ նպատակն իրագործված է
- Պլանում սահմանված կարճաժամկետ նպատակն հրագործված չէ

h/h	Թափոնի տեսակ	Պլանավորման ժամանակաշրջանում առաջացած թափոնների քանակ (բարձր,	Պլանավորման ժամանակաշրջանում Թափոնի անընդհատ գոյացում՝ 1 շնչի	Պլանավորման ժամանակաշրջանում Թափոնի անընդհատ գոյացում՝ ընդհ.	Թափոնների գործածության ***կարճաժամկետ*** թիրախներ և դրանց հասնելու կարողություններ **/2024-2026 թվականներ/**										Նշումներ
					1	2	3	4	5	6	7	8	9	10	
					Հասանելի չտեսակավորված հավաքում (%	Տեսակավորված հավաքում (%	Տեղափոխում (% ընդհանուր	Վերօգտագործում /կրկնաօգտագործում (% ընդհանուր	Վերամշակում, օգտահանում (% ընդհանուր քանակից)						
									Վերամշակում, օգտահանում որպես երկրորդային	Անընդհատ և այլ թափոնների օգտահան-ում	Էներգիայի օգտահանում /կերտագրգ, բիոկեր,	Վնասազերծում /հեղոքացում (% ընդհանուր քանակից)	Տեղադրում ոչ սանիտարական	Տեղադրում սանիտարական	
1	Կոշտ կենցաղային թափոն, այդ թվում՝														
	թուղթ, ստվարաթույթ														
	պլաստիկ														
	ապակի														
	օրգանական														
2	Խոշոր եզրաչափերի թափոն														
3	Շինարարական աղբ														
4	Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն														
5	Անվադողեր														
6	Փաթեթավորում և փաթեթվածք														
7	Էլեկտրական և էլեկտրոնային թափոն														
8	Կենսաբանական թափոն														
9	Այլ (նշել ըստ անհրաժեշտության)														

2) ԹԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սույն բաժնում պետք է վերլուծվեն նպատակներն ու թիրախները, որոնց իրագործումը չի հաջողվել հաշվետվության ժամանակաշրջանում: Վերլուծությունը հիմնականում վերաբերում է պատճառներին և հետագա գործություններին: Վերանայվում են նաև ընթացիկ պլանում ամրագրված թիրախների ու նպատակների իրագործման համար անհրաժեշտ կարողությունների կարիքները և գործիքակազմը:

Չիրագործված նպատակի անվանում	Պլանավորված թիրախ	Փաստավի իրագործման պատճառները	Հետագա գործողությունները	Նշումներ

3) ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՊԼԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սույն բաժնում պետք է նկարագրվեն ընթացիկ պլանում փոփոխման ենթակա կետերը՝ վերջիններիս հիմնավորման հետ մեկտեղ: